# ՏԵՂԵԿԱՆՔ

ԱԺԲԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2020 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ, ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)













* ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրքեր

** Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները,

*** Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև՝ ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)

2020 թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 887.5 մլրդ դրամ, որը կազմում է 2020թ. ինն ամսվա համար հաստատված ցուցանիշի 76.5 %-ը: Հատկանշական է, որ 2020 թ. փաստացի ցուցանիշը 2019թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 5.3 %-ով կամ 49.9 մլրդ դրամով, իսկ 2018թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 14.9 %-ով կամ 114.9 մլրդ դրամով:

2020 թ. հունվար-օգոստոս ամիսներին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 294.4 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 6.1 %-ով, սակայն 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 9.7 %-ով,
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 102.9 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 15.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշից պակաս է 5.2 %-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 274.8 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 2.0 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 19.7 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 73.4 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 1.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 10.8 %-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 40.7 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 29.2 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 23.4 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 31.1 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 5.1 %-ով, սակայն 2018 թ. մակարդակից պակաս է 12.1 %-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 19.5 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 3.6 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 39.2 %-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 14.9 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 20.8 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 23.4 %-ով,
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են 16.1 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 19.0 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 17.7 %-ով,
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 20 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 19.1 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշից պակաս է 7.8 %-ով:

Հարկերի անցումային գերվճարները 2020թ. հունվար-օգոստոս ամիսներին կազմել են -235.3 մլն դրամ՝ 2019թ. -833.9 մլն դրամի և 2018թ. -55 մլրդ դրամի դիմաց:

Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվությունը 2018-2020թթ. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ